

Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանի ուղերձը Թատրոնի միջազգային օրվա կապակցությամբ

27.03.2019

Ամեն տարի այս օրը՝ մարտի 27-ին, աշխարհի տարբեր ծայրերում նշվում է Թատրոնի միջազգային օրը՝ որպես թատրոնի մշակների ու գործիչների մասնագիտական տոն: Թատրոնը մեր կյանքում առանցքային տեղ է գրավում, որովհետև հայ մարդն իրեն հուզող բազմապիսի հարցերի ու խնդիրների լուծման բանալին փնտրել է նաև թատրոնում: Այս զարմանալի արվեստն առանձնանում է ունեցածի արժևորման ու նորի գիտակցման ներդաշնակությամբ:

Աշխույժ թատերական կյանքով ավելի քան մեկ դար է, ինչ ապրում է նաև մեր մարզկենտրոն Գավառ քաղաքը, որի բեմում հանդես են եկել Հայաստանի գրեթե բոլոր ականավոր թատերական գործիչները: Իսկ առավել մեծ ձեռքբերումը Անկախ Հայաստանի պատմության մեջ եղավ Գավառի նորակառույց թատրոնի շենքի շահագործումը, որն այսօր մարզի մշակութային կյանքում ձեռք է բերել կարևորագույն դերակատարություն՝ նոր էջ բացելով մեր երկրի թատերական արվեստի պատմության կերտման մեջ:

Հարգելի գործընկերներ,

Թատրոնի միջազգային օրվա առթիվ ջերմորեն շնորհավորում եմ թատերական բոլոր գործիչներին և թատրոնի նվիրյալներին, մաղթում ստեղծագործական ձեռքբերումներ ու լեփ-լեցուն դահլիճներ:

Լավագույն ցանկություններով՝

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյան